ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

29 օգոստոսի 2016թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի բոլոր 15 անդամները:

1. Ալեքսան Շամիլի Մարգարյան –դեկան,ֆ.մ.գ.թ, խորհրդի նախագահ
2. Քրիստինե Համլետի Մխիթարյան- քարտուղար,ասիստենտ, ՀՀ դիզայներների միության անդամ, ,,Դիզայն" մասնագիտության ուսումնական խորհրդատու
3. Համլետ Միհրդատի Ասատրյան –դոցենտ, ՀՀ նկարիչների միության անդամ, ֆակուլտետի գեղարվեստական խորհրդի նախագահ
4. Կարո Հայկազի Ղուլիջանյան - Նոյեմբերյան քաղաքի արվեստի դպրոցի տնօրեն
5. Լիլիթ Ռոբերտի Ղալումյան – Իջևանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Համլետ Խաչատուրի Մխիթարյան - Իջևան քաղաքի արվեստի դպրոցի տնօրեն
7. Մարտին Վարդանի Հարությունյան –ասիստենտ,արվ.գ.թ., ,,Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի" ամբիոնի վարիչի ժ/պ
8. Արթուր Համլետի Միրզոյան –ասիստենտ,ՀՀ նկարիչների միության անդամ, ,,Գծանկարի,գունանկարի և քանդակի" ամբիոնի վարիչ
9. Անուշ Լյուբիկի Չիբուխչյան- ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ, մասնագիտության պատասխանատու
10. Լևոն Երվանդի Լաչիկյան – ասիստենտ
11. Դավիթ Անդրանիկի Պողոսյան-դասախոս,ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
12. Սերգեյ Թորգոմի Հովհաննիսյան - ասիստենտ,ՀՀ նկարիչների միության անդամ
13. Նարեկ Շավարշի Ղազարյան-չորրորդ կուրսի ուսանող,ՈՒԳԸ նախագահ
14. Արման Պավելի Ալեքսանյան-երրորդ կուրսի ուսանող,ՖՈՒԽ նախագահ
15. Դիաննա Արտակի Դավթյան –երկրորդ կուրսի ավագ

## Օրակարգ

1. Խորհրդի գիտական խորհրդի կազմի և 2016-2017 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան/

2. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի դասացուցակների քննարկում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան/

3. 2016-2017թթ.ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի և նախորդ կիսամյակի լուծարքային շրջանի կազմակեպման նախապատրաստական աշխատանքների քննարկում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան /

*ԼՍԵՑԻՆ -* Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա սկզբից ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նորացված կազմը,որն ընդգրկում է ֆակուլտետի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական առաջատար կազմին, արտաքին շահակիցների ներկայացուցիչներին, ուսանողական կառույցներին,ղեկավարներին և ավագներին: Այնուհետև մանրամասն ներկայացվեց ֆակուլտետի խորհրդի 2016-17թթ. ուստարվա աշխատանքային պլանը և նշվեց, որ վերջինս բխում է մասնաճյուղի ռազմավարական պլանից: Այն ընդգրկում է բակալավրի I,II,III և IV կուրսի ուսումնական պրոցեսների բոլոր գործընթացները:Ֆակուլտետի խորհուրդը գումարվում է ամենամսյա պարբերականությամբ, հարկ եղած դեպքում նաև արտահերթ:

Քննարկումից հետո եղավ ընդհանուր առաջարկ հաստատելու խորհրդի 2016-17թթ. ուստարվա աշխատանքային պլանը/ կցվում է արձանագրությանը/:

*ՈՐՈՇԵՑԻՆ-* Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2016-17թթ. ուստարվա ֆակուլտետի խորհրդի նոր կազմը և աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյան: Նա ներկայացրեց 2016-17թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և երեք մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, III և IV կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական ծանրաբեռնվածության:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-* Գիտական խորհրդի անդամները:Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նրանք առաջարկեցին ներկայացնել տնօրենություն՝ հաստատելու այն:

*ՈՐՈՇԵՑԻՆ-* 2016-17թթ.ուստարվա I կիսամյակի դասացուցակը ներկայացնել տնօրենության քննարկմանը ու հաստատմանը:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային հարցերի վերաբերյալ հանձնարարականներով:Մասնավորապես նշվեց, որ երեք ուսանողներ վերադարձել են ՀՀ ազգային բանակից և ունեն ակադեմիական պարտքեր և առարկայական տարբերություններ:Այնուհետև Ա.Մարգարյանը ներկայացրեց առաջին լուծարքային շրջանի և վերոնշյալ ուսանողների անհատական գրաֆիկները և հանձնարարեց ամբիոնի վարիչներին առանձնահատուկ ուշադրության արժանացնել պարտքերի վերահանձնման գործընթացներին:

*ՈՐՈՇԵՑԻՆ-*Գործընթացի իրականացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և մասնագիտության պատասխանատուի վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Մխիթարյան

# ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ

# ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2016-2017 ՈՒՍ.ՏԱՐՎԱ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

# /ԲԱԿԱԼԱՎՐԻ /

| *Անցկացման ժամկետը* | *ՕՐԱԿԱՐԳ* | *ԶԵԿՈՒՑՈՂ* | *ԾԱՆՈԹ.* |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 29.08.2016 | 1. Ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի քննարկում:<br>2. 2016-17ուստարվա առաջին կիսամյակի դասացուցակների | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ | |

| | | | |
|---|---|---|---|
| | քննարկում: | | |
| 22.09.2016 | 1. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:<br>2. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:<br>3. Առաջին կուրս ընդունված ուսանողների հետ կապված հարցերի քննարկում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ<br>Ա.Լ.ՉԻԲՈՒԽՉՅԱՆ<br>Մ.Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| 27.10.2016 | 1. Դասավանդման պրոցեսում տեղատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման և նորագույն մեթոդների քննարկում :<br>2. 2016-2017 ուս.տարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի , ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ<br>Ա.Հ.ՄԻՐԶՈՅԱՆ<br>Հ.Մ.ԱՍԱՏՐՅԱՆ | |
| 26.11.2016 | 1. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:<br>2. Առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:<br>3. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի քննարկում և հաստատում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ | |

| | | | |
|---|---|---|---|
| 26.12.2016 | 1. 2016-17 ուս.տարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի գործընթացի քննարկում՝ մուտքերի կատարողականով: 2. Երկրորդ ընթացիկ ստուգումների, քննությունների և ստուգարքային շրջանի ամփոփում: 3. Ֆակուլտետի զարգացման 2017թ. տարեկան ծրագրի քննարկում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ Ա.Լ.ՉԻԲՈՒԽՉՅԱՆ Հ.Մ.ԱՍԱՏՐՅԱՆ | |
| 26.01.2017 | 1. Դեկանի կիսամյակային հաշվետվության ներկայացում: 2. 2016-17ուս.տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում/առանց լուծարքի շրջանի/ 3. 2017թ. ցուցահանդեսների կազմակերպման գրաֆիկի դասախոսական կազմի և քննարկում և հաստատում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ Ա.Հ.ՄԻՐԶՈՅԱՆ Ա.Հ.ԱՍԱՏՐՅԱՆ | |
| 06.02.2017 | 1. 2016-17ուս.տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակների քննարկում: 2. Երկրորդ կիսամյակի դասապրոցեսի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների քննարկում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ | |
| 28.02.2017 | 1. 2016-17ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփում: 2. 2016-17ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում: 3. Ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվության ներկայացում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ Ա.Հ.ՄԻՐԶՈՅԱՆ Մ.Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| 16.03.2017 | 1. Ֆակուլտետի կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության քննարկում:<br>2. 2015-16 ուստարվա երկրորդ կիսամյակի ԵՊՀ ռեկտորատի կողմից ուսանողների շրջանում անցկացված դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցման արդյունքների քննարկում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ<br>Դ.Լ.ՉԻԲՈՒԽՉՅԱՆ<br>Ք.Հ.ՄԽԻԹԱՐՅԱՆ | |
| 12.04.2017 | 1. 2016-17 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:<br>2. 2016-17ուստարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:<br>3. Պրակտիկաների անցկացման ծրագրերի քննարկում և հաստատում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ<br>Ա.Հ.ՄԻՐԶՈՅԱՆ<br>Մ.Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| 19.05.2017 | 1. 2017 -18 ուս.տարվա աշխատանքային ուսումնական պլանների քննարկում և հաստատում:<br>2. 2016-17ուս.տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում և | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ<br>Ա.Հ.ՄԻՐԶՈՅԱՆ<br>Մ.Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ժամանակացույցի  քննարկում և հաստատում:<br>3. 2017-18 ուս.տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների քննարկում:<br>4. Ավարտական  և կուրսային աշխատանքների վիճակի քննարկում: | | |
| 30.06.2017 | | 1. 2016-17ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:/առանց լուծարքի/<br>2. Ամփոփիչ քննության , ավարտական  և կուրսային աշխատանքների պաշտպանության հաշվետվության քննարկում:<br>3. Մասնագիտության պատասխանատուի հաշվետվության ներկայացում:<br>4. Մասնագիտությունների կրթական ծրագրերում կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունների քննարկում և ներկայացում  մասնաճյուղի գիտական խորհուրդ: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ<br>Ա.Լ.ՉԻԲՈՒԽՉՅԱՆ<br>Դ.Լ.ՉԻԲՈՒԽՉՅԱՆ<br>Ք.Հ.ՄԽԻԹԱՐՅԱՆ | |
| 08.07.17 | | 1. Պրակտիկաների ղեկավարների հաշվետվությունների և առաջարկությունների ներկայացում:<br>2. 2016-2017ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:<br>3. Դեկանի տարեկան հաշվետվության ներկայացում: | Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ<br>Ա.Հ.ՄԻՐԶՈՅԱՆ<br>Մ.Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ֆ.Մ.Գ.Թ. Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ